մի կաղած կայ ի վերայ ճանապարհին, ուր Տէրն ասաց. ողջ էք, եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա եւայլն. միւսն է՝ հաւանաբար Խաչակրաց ժամանակ լատիներէնէ թարգմանուած ցուցակ մը, Մարկոս գրչին ընդօրինակութեամբ եւ անթուական, որ կը գտնուի մեր մատենադարանին (թ. 1130) մէկ ձեռագրին մէջ. նոյն ցուցակը կը բովանդակէ նաեւ հետեւեալ խօսքերը. «եւ ի սուրբ Սիոնի ճանապարհին է տեղի մի որ Քրիստոս երեւցաւ երեք Մարիամանցն»։

3.— Այս բոլոր տուեալներով կը հաստատուի Իւղաբեր կանանց ուխտատեղին. կը մնայ հիմա գիտնալ թէ ո՞ր քրիստոնեայ համայնքին ձեռքը կը գտնուէր այս տեղը եւ ո՞ր ժամանակ չինուած էր տեղւոյս եկեղեցին։ Այս մասին յիշատակարան կը պակսի եւ անստոյգ կը մնայ ծագումը, բայց անտարակոյս քրիստոնէական հին դարերու մէջ հաստատուած կը թուի ան։ Որչափ անստոյգ ըլլայ անոր ծագումը, բայց մենք վաստ ունինք թէ ԺԲ. դարուն նոյն եկեղեցիին գործածութիւնը Հայոց ձեռքն էր ու Ս. Յակոբի Միաբանութիւնը պաշտամունք կը կատարէր հոն։ Ս. Երկրի հայ պատմութիւնը եւ մեր մատենադարանի ձեռագիրները ո՛եւէ յիշատակութիւն չունին այդ մասին. ուխտաւոր եպիսկոպոս մը՝ Յովհաննէս Վըրզպուրկցի, որ հաւանաբար 1160ին կամ 1170ին ուխտի եկած է Երուսաղէմ, ա՛ն է որ կը յիշէ իր Ուղեգրութեան մէջ (Տե՛ս Descriptio terrae sanctae, Migne Patr. Lat. col. 1057), թէ Ս. Յակոբի Հայոց վանքին հարաւը կը գտնուի ուրիշ եկեղեցի մը՝ որ Հայոց ձեռքն է (անդ, էջ 21–22)։ Յիշեալ եպիսկոպոսը հիացումով կը խօսի Ս. Յակոբի Հայոց վանքին վրայ եւ կը յիշատակէ նաեւ այն փոքր ու վաղեմի սրբավայրերը որ կանգուն էին տակաւին Սիոնի ճանապարհին վրայ։ Երախտապարտ ենք այս Պաւերիացի Յովհաննէս եպիսկոպոսին որ իր այս հակիրճ տողերով լուսաբանած է Իւղաբեր կանանց եկեղեցիին հայկական ծագումը եւ Հայոց սեպհականութիւնը մինչեւ Խաչակրաց թուականը։ Մենք ուրախ ենք որ յիշեալ եկեղեցականը օգնեց մեզի երեւան բերելու Հայ–Երուսաղէմի վանականութեան ու հայ բարեպաշտութեան ստեղծագործութիւններէն մին ալ։ Մեր քաղաքացի հայերուն կիրարկած արարերէն մէկ բառը՝ Տարը Մարիամաք (Տե՛ս Ուղեցոյց Ս. Տեղեաց, էջ 178), ինչպէս նաեւ վերեւ ակնարկուած տան Ս. Յակոբի վանքին կալուածոց խիստ մօտ